ՀՅՈՒՄԱՆ ՌԱՅԹՍ ՀԱՈՒՍ
ԵՐԵՎԱՆ

2017 թ.

Տարեկան զեկույց

Հյուման ռայթս հաուս Երևանի

2017 թ.

Տարեկան զեկույց

Երևան, 2018 թ.

ՀՌՀ Երևանը շնորհակալություն է հայտնում բոլոր այն իրավապաշտպաններին, այդ թվում՝ փաստաբաններին, լրագրողներին, բնապահպաններին և նախաձեռնող քաղաքացիներին, որոնք բարեխղճորեն մեզ հետ կիսեցին իրենց ունեցած տեղեկատվությունը և փորձագիտական գնահատականները:

Զեկույցը պատրաստել են ՀՌՀ Երևանի անդամ Կանանց ռեսուրսային կենտրոն, Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք (Փինք Արմենիա) և Սոցիոսկոպ հասարակական կազմակերպությունների իրավապաշտպանները և հետազոտողները: Զեկույցի համար հիմք են դարձել ՀՌՀ Երևանի փաստահավաք աշխատանքը և հարցումները, հակահիրավապաշտպան կայքերի և ֆեյսբուքյան էջերի մոնիթորինգը, ինչպես նաև armtimes.com, azatutyun.am, epress.am և hetq.am լրատվական կայքերի հոդվածները և hahr.am, hcav.am, khosq.am, sut.am, ypc.am կայքերի նյութերը:

Այս փաստաթուղթը չի ներառում հանրային շահերի պաշտպանների և իրավապաշտպանների նկատմամբ ճնշումների և գործունեության խոչընդոտների բոլոր այն դեպքերը, որոնցում ճնշման ենթարկվածները հանրայնորեն արգելել են իրավապաշտպան կառույցներին հիշատակել իրենց անունը:

Իրավապաշտպանների և հանրային շահերի պաշտպանների նկատմամբ ճնշումների մասին տվյալների հետագա համալրման համար բոլոր շահագրգիռ անձինք կարող են կապ հաստատել ՀՌՀ Երևանի հետ՝ **hrhyerevan@gmail.com** հասցեով:

Բովանդակություն

Նախաբան 4

Փաստաբանների պաշտպանական գործողության խոչընդոտումներ 6

Քաղաքական նշանակություն և հանրային հնչեղություն ունեցող գործերում ճնշումներ 6

Սպառնալիքներից անպաշտպանվածություն 7

Լրագրողների և ՁԼՄ-ների գործունեության և ազատ խոսքի խոչընդոտումներ 8

Բռնությունների և ճնշումների վիճակագրություն 8

Քաղաքական օրինախախտումները բարձրաձայնողների նկատմամբ ճնշումներ 8

Հանրային կարծիքի ուղղորդում ու մանիպուլիացիա 10

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության սահմանափակումներ 12

Ինստիտուցիոնալ հոմոֆոբիա 12

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանների թիրախավորում և սպառնալիքներ 14

Կանանց սեռական, վերարտադրողական և այլ իրավունքների պաշտպանության սահմանափակումներ 15

Համակարգային ճնշումներ 15

Կանանց իրավունքների պաշտպանների նկատմամբ թիրախավորում և սպառնալիքներ 15

Պաշտոնատար անձանց իրավախախտման դեպքերի բարձրաձայնման հետևանքով վրեժխնդրություն, կյանքի և առողջության սպառնալիքներ 18

Արդար դատաքննության իրավունքի խախտումներ 18

Քաղաքացիների հանդեպ բռնաճնշումների դեմ պայքարի խոչընդոտում 18

Բնապահպանների նկատմամբ ճնշումներ և գործունեության սահմանափակումներ 20

Ինստիտուցիոնալ գործունեության և actio popularis-ի սահմանափակումներ 20

Կին բնապահպանի նկատմամբ վիրավորանք և ճնշում 22

Գնահատականներ և փոփոխության պահանջներ 23

Ամփոփ գնահատական 23

Դեպքերի գնահատականներ 23

ՀՌՀ Երևանի պահանջներ 25

Նախաբան

Հայաստանում 2017-ին իրավապաշտպանների և իրավապաշտպան ակտիվիստների հետ տեղի ունեցած միջադեպերի դիտարկումները հիմք են արձանագրելու, որ երկրում անբավարար են քաղաքացիների և հանրային խմբերի շահերն ու իրավունքները լիարժեքորեն և ապահով կերպով պաշտպանելու պայմանները: Հիմնարար աննպաստ գործոններն են իրավապաշտպանների, բնապահպանների, փաստաբանների, լրագրողների ու ՀԼՄ-ների հանդեպ պետական ինստիտուցիոնալ խոչընդոտները, անհավասար վերաբերմունքը և պետական հաստատությունների հետ սերտաճած կառույցների (բիզնես, եկեղեցի, ՀԿ-ներ) կողմից ստեղծվող արգելքները:

Այնինչ Հայաստանը, ստորագրելով ՄԱԿ-ի «Իրավապաշտպանների մասին Հռչակագիրը»[1], առաջնային պարտավորություն և պարտականություն է ստանձնել ոչ միայն պաշտպանել, աջակցել և իրականացնել մարդու բոլոր իրավունքները և հիմնարար ազատությունները, այլև ձեռնարկել անհրաժեշտ քայլեր՝ նպաստելու իրավապաշտպան անհատների, խմբերի և ընկերակցությունների գործունեության իրականացմանը:

Ակնառու է, որ իրավապաշտպանները և հանրային շահերի պաշտպան ակտիվիստները բախվում են ոչ միայն Հայաստանի անկատար դատաիրավական համակարգի և պետության կառավարման հաստատությունների (ՏԻՄ, իրավապահ մարմիններ) առաջացրած խոչընդոտներին, այլև իշխող կուսակցությունների կողմից խրախուսվող խտրականության մշակույթին: Նրանց որդեգրած գաղափարախոսությունները («ազգ-բանակ» ռազմապաշտական հայեցակարգը, որով փառաբանվում է ուժային-առնակենտրոն էթիկան, և պետական գործերում Հայ առաքելական եկեղեցու միջամտության իրավասության մեծացումը) ևս բացասական հետևանքներ ունեն ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության առանց այն էլ դժվարին գործում:

Բացի դրանից՝ մարդու իրավունքների ոլորտը հաճախ ներկայացվում է իբրև աշխարհաքաղաքական պայքարի ասպարեզ՝ ՌԴ կառավարող համակարգի հակաեվրոպական պրոպագանդան առաջ մղելու, ինչպես նաև ներքին խնդիրներն անտեսելու համար: Այս պարարտ հողում են գործում վերջին շրջանում թափ առած հակաիրավապաշտպան ակտիվիստները և բիզնես ոլորտի ու կուսակցական շահերի ջատագով ՀԿ-ները՝ հակազդելով և արգելքներ առաջացնելով Հայաստանում իրավապաշտպան շարժման համար: Մյուս կողմից՝ ՀՀ կառավարության հետ համագործակցության շրջանակներում միջազգային պաշտոնական կառույցները հաճախ ընկրկում են, գնում զիջողությունների՝ մարդու իրավունքների առաջնահերթության սկզբունքը Հայաստանում ամրապնդելու գործում և իրենց իսկ կողմից ներկայացվող առաջարկություններն ի կատար ածելու պահանջներում:

---

[1] Համընդհանուր ճանաչված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության և ապահովման ուղղությամբ անհատների, խմբերի և հասարակական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հռչակագիր [PDF]: (1998.12.09): 2018.13.03-ի դրությամբ հասանելի է այստեղ՝
http://www.ohchr.org/Documents/Issues/Defenders/Declaration/declaration_arm.pdf:

Հանրայնորեն տեսանելի ակտիվ գործիչները և իրավապաշտպանները (հատկապես կանանց և ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանները, կառավարության կամ պետական մարմինների քաղաքական քննադատները) դառնում են խտրականության, պարսավանքների, ատելության և թշնամանքի թիրախ, ստանում են սպառնալիքներ, հետապնդվում են դատական կարգով: Հատկանշական է, որ թիրախավորման արշավներն ուղղորդվում են պետական մարմինների, դրանց ներկայացուցիչների, իշխող Հանրապետական կուսակցության և դրանց հովանավորչությունը վայելող լրատվամիջոցների կողմից: Որպես հետևանք վերջին տարիներին Հայաստանում ծաղկում են կոնկրետ կուսակցական և պետական գործիչների հետ փոխառնչվող, Հայաստանում ՌԴ ստվերային աջակցությամբ ուղղորդված հակահիրավապաշտպան կառույցները և մեծ բիզնեսի շահերը առաջ տանող հասարակական կազմակերպությունները: Դրանք որոշ դեպքերում հանդես են գալիս իբրև առաջադիմական իրավապաշտպաններ, սակայն առավել հաճախ հայհոյանք, զրպարտություն, ատելության խոսք և սպառնալիքներ են տարածում իրավապաշտպանների հասցեին և իրենց օրակարգով առաջ են մղում տվյալ քաղաքական հոսանքների շահերը՝ ի հաշիվ Հայաստանի քաղաքացիների շահերի և իրավունքների պաշտպանության:

Փաստաբանների պաշտպանական գործողության խոչընդոտումներ

Քաղաքական նշանակություն և հանրային հնչեղություն ունեցող գործերում ճնշումներ

2017-ին ՀՀ դատարաններում արձանագրվել են փաստաբանների հանդեպ ճնշումների դեպքեր, մասնավորապես՝ քաղաքական նշանակություն և հնչեղություն ունեցող «Սասնա ծռեր» խմբի և «Սեֆիլյանի և մյուսների» գործերում: Հունիսի 13-ին Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի կարգադրիչները փորձել են «զննել» Ժիրայր Սեֆիլյանի, Ներսես Պողոսյանի և այլ անձանց փաստաբաններին: Մեղադրյալների պաշտպաններից Տիգրան Եգորյանը, Նինա Կարապետյանցը, Տիգրան Հայրապետյանը և Արայիկ Պապիկյանը նշել են, որ կարգադրիչներն իրականում իրենց ցանկացել են խուզարկել, ինչն անօրինական է: Նրանք հրաժարվել են խուզարկվելուց: Հարկ է նշել, որ ըստ փաստաբանների՝ դատարանի կարգադրիչները կողմնակալ վերաբերմունք են ցուցաբերել և «զննել» են միայն փաստաբաններին, իսկ դատավորին և դատախազներին՝ ոչ: Համանման վերաբերմունքի են արժանացել նաև հուլիսի 3-ին տեղի ունեցած «Սասնա ծռեր» խմբի գործով 32 մեղադրյալներից 18-ի մասով ներգրավված որոշ փաստաբաններ: Դատական կարգադրիչները կամայական կերպով պաշտպանների մի մասի պայուսակներն առանց ստուգելու ներս էին թողել, իսկ մի քանիսին՝ Մուշեղ Շուշանյանին, Մոնիկա Մարգարյանին և Ինեսսա Պետրոսյանին, փորձել էին խուզարկել: Հետագայում նույնը կրկնվել է սեպտեմբերի 20-ին տեղի ունեցած հերթական դատական նիստի ժամանակ, երբ դատավոր Արտուշ Գաբրիելյանը սանկցիա է կիրառել բացակա փաստաբաններ Արայիկ Պապիկյանի և Մուշեղ Շուշանյանի նկատմամբ: Դատավորը դիմել է Փաստաբանների պալատ՝ կարգապահական վարույթներ հարուցելու խնդրանքով: Փաստաբանների բացակայությունը կրկին պայմանավորված էր նրանով, որ վերջիններս թույլ չէին տվել դատարանի շենք մտնելիս իրենց խուզարկել: Ըստ քրեական դատավարության օրենսգրքի՝ առանց փաստաբանների նիստ առհասարկ չէր կարող կայանալ, այն պետք է հետաձգվեր: Համաձայն վերոնշյալ փաստաբանների՝ դատարանը խուզարկման գործողություններով, ինչպես նաև անհիմն սանկցիաներով խոչընդոտել է պաշտպանական գործողությունների իրականացմանը:

Փաստաբանների նկատմամբ կողմնակի ճնշման մասին է բարձրաձայնել «Հելսինկյան ասոցիացիա» ՀԿ նախագահ Նինա Կարապետյանցը, որի գնահատմամբ՝ իրենց փաստաբան Արայիկ Պապիկյանի ներգրավվածությունը վերոնշյալ՝ քաղաքական նշանակության («Սասնա ծռեր» խմբի, «Սեֆիլյանի և մյուսների») գործերում առիթ է հանդիսացել դատական համակարգի կողմից նրա հանդեպ վրեժխնդրության՝ այլ գործերի մասով[2]: Մասնավորապես՝ Արայիկ Պապիկյանի պաշտպանյալ Կարեն Կունգուրցևը, դեռևս 2016-ին արդարացված լինելով 1-ին ատյանի դատարանի կողմից, 1 տարի անց՝ 2017 հուլիսին, Վերաքննիչ դատա-

[2] Վերաքննիչ դատարանը 7 տարի տվեց սպանության գործով արդարացված երիտասարդին: (2017.07.18): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/07/18:

րանի կողմից դատապարտվել է 7 տարվա ազատազրկման: Արայիկ Պապիկյանը դիմել է Վճռաբեկ դատարան, գործը ընդունվել է վարույթ:

Սպառնալիքներից անպաշտպանվածություն

2017-ին փաստաբան Ինեսսա Պետրոսյանի և նրա ընտանիքի նկատմամբ հնչել են սպառնալիքներ՝ կապված վերջինիս մասնագիտական գործունեության հետ: Նրա գործերից մեկով ամբաստանյալի կարգավիճակում հայտնված խումբը (որոնցից մեկը բարձրաստիճան անձի՝ արդարադատության գնդապետի որդի է) դատաքննության ընթացքում բազմիցս ագրեսիվ վարք է դրսևորել՝ հայհոյանքներ ու սպառնալիքներ ուղղելով Պետրոսյանի հասցեին: Փաստաբանը, բացի դատարանում ստացած հայհոյանքներից, սպառնալից նամակներ է ստացել նաև Ֆեյսբուք սոցիալական ցանցով Նարինե Արզումանյան կեղծանվամբ օգտատիրոջից: 2017-ի մայիսին փաստաբանը դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ դատարանում իրեն ուղղված հայհոյանքների և սպառնալիքների վերաբերյալ նյութեր նախապատրաստելու և քրեական գործ հարուցելու առնչությամբ: Պետրոսյանի դիմումի հիման վրա հարուցվել է քրեական գործ, և նա ճանաչվել է տուժող: Ըստ իր ունեցած տվյալների՝ նախաքննությունը դեռ շարունակվում է, և որևէ առաջընթաց չկա: Չնայած դատական նիստին հնչած սպառնալիքների մասին վկայող բազմաթիվ ձայնագրություններին և դահլիճում գտնվող լրագրողների՝ որպես վկաների հարցաքննություններին՝ գործը 2017-ին դեռ նախաքննության փուլից առաջ չի անցել:

Լրագրողների և ԶԼՄ-ների գործունեության և ազատ խոսքի խոչընդոտումներ

Բռնությունների և ճնշումների վիճակագրություն

Համաձայն Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի 2017 թվականի տարեկան զեկույցի՝ Հայաստանում 11 լրագրող ենթարկվել է ֆիզիկական բռնության, ԶԼՄ-ների և լրագրողների դեմ ճնշումների 113 դեպք է եղել, 62-ի դեպքում խախտվել է տեղեկություններ ստանալու ու տարածելու իրավունքը: Խորհրդարանական նախընտրական շրջանում արձանագրվել է լրագրողների նկատմամբ ֆիզիկական բռնության 3 դեպք: Ընտրությունների օրը՝ ապրիլի 2-ին, 2 լրագրող ենթարկվել է ֆիզիկական ճնշումների, և ևս 8 լրագրողի աշխատանքը խոչընդոտվել է: Հատկանշական է, որ լրագրողների նկատմամբ կատարված բռնությունները մնացել են անպատիժ: Նախընտրական և ընտրական շրջանում արձանագրված բռնությունների ու խոչընդոտումների 29 դեպքից միայն 7-ի առնչությամբ է քրեական գործ հարուցվել, որոնցից 5-ը կարճվել են հանցակազմի բացակայության պատճառով, և միայն 2-ն են հասել դատարան[3]:

Քաղաքական օրինախախտումները բարձրաձայնողների նկատմամբ ճնշումներ

2017-ին 5 լրատվամիջոցների (168.am, a1plus.am, epress.am, iravunk.com, tert.am) դեմ զրպարտության մեղադրանքով դատական հայց է ներկայացրել ՀՀ նախկին վարչապետ, այժմ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի նախագահ Տիգրան Սարգսյանը (նստավայրը՝ Մոսկվա)՝ պահանջելով հրապարակած տեղեկության հերքում: Տեղեկատվությունը կապված է 2016 թ. հոկտեմբերի 7-ին հրավիրված մամուլի ասուլիսում Սլովակիայի հայկական համայնքի ղեկավար, «ԵՄ-ԱՍԻԱ բիզնեսի ֆինանսավորման կենտրոն» («EU-ASIA Business Finance Centre») հոլդինգի ղեկավար, գործարար Աշոտ Գրիգորյանի հնչեցրած այն մտքի հետ, որ Սարգսյանը, օգտագործելով իր օֆշորյան հաշիվները, սնանկացման է տարել հայաստանյան «Նաիրիտ» գործարանը: Սկզբնական պահանջով Սարգսյանը լրատվամիջոցներից պահանջում էր նաև գումարային փոխհատուցում, սակայն դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած դատական նիստի ժամանակ նրա ներկայացուցիչը հրաժարվել է գումարի պահանջից[4]: Դատական գործընթացը շարունակվում է:

---

[3] Տե՛ս «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե»-ի 2017 թ. զեկույցը (Հայաստանում խոսքի ազատության վիճակի և լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումների մասին ԽԱՊԿ-ի 2017 թ. տարեկան զեկույց: (2018.01.17): 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://khosq.am/reports):

[4] Տիգրան Սարգսյանը ԶԼՄ-ներից այլևս գումար չի պահանջում, միայն հերքում: (2017.12.07): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/12/07/:

Սյունիքի մարզպետ Վահե Հակոբյանը 2017-ին հայց է ներկայացրել բնապահպան Արթուր Գրիգորյանի (մանրամասն տե՛ս էջ 20), ինչպես նաև նրա ներկայացրած տեղեկատվությանը անդրադարձած ԶԼՄ-ներից որոշների՝ aravot.am, epress.am և syuniacyerkir.am կայքերի դեմ: Հակոբյանը պնդում է, որ իրեն զրպարտել են, և Գրիգորյանից պահանջել է 2 միլիոն դրամ, ինչպես նաև բոլոր պատասխանողներից պահանջել է հերքել իր մասին հրապարակված տեղեկատվությունը: Գործով դատական առաջին՝ 2017 թ. նոյեմբերի նիստին պարզ դարձավ, որ հայցվոր կողմը aravot.am-ի մասով հայցը հետ է վերցրել, ինչպես հետագայում պարզվեց, խնդրո առարկա հոդվածը կայքից հանելու պայմանը բավարարելու արդյունքում[5]: Դատական գործընթացը շարունակվում է: Հատկանշական է, որ այս գործի հիմքում ընկած նյութերը բացառիկ չեն և հրապարակվել են մի շարք այլ լրատվամիջոցների կողմից ևս, սակայն հայցվորները բողոքում են լրատվամիջոցներից մի քանիսի դեմ միայն:

Sut.am կայքի հիմնադիր, «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ ծրագրերի համակարգող Դանիել Իոաննիսյանի դեմ 2017-ին ներկայացվել է 30 դատական հայց: Դրանք բոլորը վերաբերել են կայքի՝ մարտի 24-ի հրապարակմանը[6], որում բացահայտվում էր ԱԺ 2017 թ. ընտրությունների նախընտրական շրջանում ՀՀԿ-ի կողմից վարչական ռեսուրսի՝ դպրոցների և մանկապարտեզների տնօրենների անօրինական շահագործումը, ընտրածայների և ընտրողների կամքին հակառակ նրանց անձնագրային տվյալների հավաքագրումը: Հայց ներկայացրած բոլոր 30 տնօրենները պահանջում էին հերքել զրպարտություն համարվող տեղեկությունները և 2 միլիոնական դրամ փոխհատուցում վճարել: Սակայն առաջին իսկ դատական նիստին նրանք բոլորը հայցերը հետ են վերցրել:

Sut.am-ի՝ վերոնշյալ հանրային և քաղաքական նշանակության հետաքննական ուսումնասիրության հրապարակումից 2 օր անց տեղի ունեցավ Դ. Իոաննիսյանի ընտանիքի և անձնական կյանքի մասին՝ միայն ՀՀ իրավապահ մարմիններին հայտնի տվյալների անօրինական հանրայնացումը: Դրանով կրկին չարաշահվեցին պետական ռեսուրսները, որով փորձ էր արվում վարկաբեկել Իոաննիսյանի անձն ու «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի աշխատանքը, քաղաքական և բարոյական ճնշում գործադրել վերջիններիս վրա, խոչընդոտել ընտրողների ազատ կամարտահայտման իրավունքի պաշտպանությանը Հայաստանում: Իոաննիսյանի անձնական տվյալներն իրենց բնույթով հրապարակման ենթակա չէին, քանի որ պաշտպանված են անձնական տվյալների պաշտպանության մասին ՀՀ քրեական օրենսգրքի 144-րդ հոդվածով և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ և 14-րդ հոդվածներով: Հաշվի առնելով այն, որ անձնական տվյալները տնօրինվել են պաշտոնական մարմինների կողմից՝ Իոաննիսյանը ապրիլին դիմել էր Հատուկ քննչական ծառայություն՝ դեպքի առթիվ քրեական գործ հարուցելու նպատակով, սակայն գործը հարուցվել է ՀՀ քննչական կոմիտեի կողմից[7]: Օգոստոսի 7-ին այդ գործը կասեցվել է՝

---

[5] «Առավոտը» պլստաց Սյունիքի մարզպետի հայցից: (2017.11.30): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/11/30:

[6] ՀՀԿ-ն չարաշահում է վարչական ռեսուրսը դպրոցներում ու մանկապարտեզներում (114 ձայնագրություններ): (2017.03.24): Sut.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://sut.am/archives/803:

[7] Խաչատրյան Տ. (2017.04.26): Դանիել Իոաննիսյանը զարմացել է, թե ինչու է իր գործը ՀՔԾ-ի փոխարեն Քննչական կոմիտեն քննում: Հայկական ժամանակ: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.armtimes.com/hy/article/110327:

մեղավորներին չգտնելու պատճառաբանությամբ: Իոաննիսյանը հոկտեմբերի 12-ին դիմել է ՀՀ գլխավոր դատախազություն՝ բողոքարկելով Քննչական կոմիտեի կողմից քրեական գործը կասեցնելու որոշումը: Հոկտեմբերի 26-ի որոշմամբ դատախազությունը այն մերժել է: Նոյեմբերի 1-ին Դանիել Իոաննիսյանը կասեցված գործի վերաբացման նպատակով դիմել է դատարան: Դատական գործընթացը շարունակվում է:

ՀՀ կառավարության կողմից առաջ տարվող ռազմապաշտական «ազգ-բանակ» հայեցակարգի մասին լրագրող, հասարակական գործիչ Գայանե Աբրահամյանի 2017 թ. հունիսին լույս տեսած հոդվածը[8] լրագրողի նկատմամբ ատելության խոսքի ալիքի և թիրախավորման առիթ է դարձել: 2017 թ. սեպտեմբերին թիրախում հայտնվեց նաև նրա կողմից ղեկավարվող «Հոդված 3» ակումբը: «Արարատ ԹՎ»-ն, որն առնչություն ունի կառավարող Հանրապետական կուսակցության հետ (հասցեն համընկնում է ՀՀԿ գրասենյակի հասցեին), մի շարք հաղորդումներ է նվիրել «Հոդված 3» ակումբին: Աբրահամյանի խոսքերով՝ հեռուստաընկերությունը այն ներկայացրել է որպես «այլասերման քարոզ տանող», «եվրոպամետ կեղծ դեբատներ վարող», «գրանտակեր»՝ նպատակ հետապնդելով հանրության շրջանում հակակրանք ու բացասական վերաբերմունք տարածել ակումբի և Աբրահամյանի գործունեության նկատմամբ: Աբրահամյանի համոզմամբ՝ «Հոդված 3»-ի հանդեպ թիրախավորումը կապված է «ազգ-բանակ» հայեցակարգը քննադատելու, ինչպես նաև ընտանեկան բռնությունը կանխարգելող օրենքի և գենդերային հավասարության մասին ծավալվող քննարկումներում ներգրավվածության հետ:

2017 թ. սպառնալիքների և թիրախավորումների է արժանացել նաև politik.am լրատվական կայքի խմբագիր Բորիս Մուրազին: Դրա համար առիթ էր դարձել կայքում Ֆեյսբուք սոցիալական ցանցից 1990-ականների մի տեսանյութի վերահրապարակումը, որտեղ Հայաստանի ներկայիս նախագահ Սերժ Սարգսյանը մասնակցում է հանցավոր աշխարհի ներկայացուցիչների հետ համատեղ խնջույքի: Ըստ Մուրազիի՝ այդ տեսանյութից հետո ֆեյսբուքյան հաղորդագրությունների, ինչպես նաև հարազատների միջոցով բանավոր փոխանցված բազմաթիվ սպառնալիքներ է ստացել իր հասցեին: Մուրազիի հանդեպ սպառնալիքներում առանձնահատուկ նշանակություն է ունեցել ազգությամբ եզդի լինելը: Սպառնացողները և վիրավորողները ձգտել են ճնշում գործադրել խմբագրի նկատմամբ իր ինքնության հիմքով՝ ընդգծելով փոքրամասնության «անիրավասությունը» երկրում լրատվական գործունեությամբ զբաղվելու և քաղաքական կամ պետական գործիչներին քննադատելու հարցում:

Հանրային կարծիքի ուղղորդում ու մանիպուլյացիա

2017-ին լրագրող-ակտիվիստ Թեհմինե Ենոքյանը 2016 թ. հուլիսի իր գործունեության համար հանրայնորեն՝ հիմնականում Ֆեյսբուք սոցիալական ցանցի միջոցով, ենթարկվել է վատաբանումների: Մասնավորապես Ենոքյանը տեսանկարահանել և լուսաբանել էր «Սասնա ծռեր» խմբի կողմից ՊՊԾ գնդի գրավմանը հաջորդած Երևանի Խորենացու փողոցում

[8] Abrahamyan G. (2017.06.14): Armenia: Nation-Army Plan Raises Concerns About Society's Militarization: Eurasianet: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://eurasianet.org/node/8399:

և «Սարի թաղ» կոչվող թաղամասում տեղի ունեցած քաղաքացիական բողոքի ցույցերը և դրանք ցրելու ոստիկանության բռնի գործողությունները: Սարի թաղում Ենոքյանի նկարահանած տեսանյութը հետագայում դարձավ այն միակ հիմքը, որի վրա կառուցվեցին ցույցին մասնակից քաղաքացիների նկատմամբ մեղադրանքները, ինչպես և նրանց պաշտպանությունը: Նույն տեսանյութում երևում է, որ ոստիկանները նույնպես տեսախցիկով նկարահանում են իրադարձությունները: Հետագայում Ոստիկանությունն իր տեսանյութն այդպես էլ չհրապարակեց, ինչը, Ենոքյանի պնդմամբ, քննիչներին հնարավորություն ընձեռեց սադրելու և ուղղորդելու Սարի թաղի բնակիչներին, որպեսզի վերջիններս մեղադրեն լրագրողին՝ ցույցին մասնակից երիտասարդների նկատմամբ իրականացվող քրեական հետապնդման առիթ դառնալու մեջ: Ըստ ուղղորդված տեսակետի՝ եթե Ենոքյանը չհրապարակեր այդ տեսանյութը կամ գոնե փակեր անձանց դեմքերը, իրենց ընկերները կամ հարազատները քրեական հետապնդման չէին ենթարկվի: Նման թիրախավորված մեղադրանքներ հնչում են Ենոքյանի դեմ մինչ օրս: Նա նույնիսկ ստիպված է եղել դիմել ՀՀ ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնին՝ խնդրելով գնահատական տալ հնչող մեղադրանքներին և իր մասնագիտական գործունեությանը: Փորձագետները փաստել են, որ Ենոքյանը որևէ իրավական կամ էթիկական նորմ չի խախտել[9]: Այսպիսով՝ ցուցարարներին անօրինական մեղադրելու բեռը քննիչները դնում են ոչ թե ՀՀ իրավական համակարգի վրա, այլ սլաքներն ուղղում են դեպի իր մասնագիտական գործունեությունը իրականացրած լրագրողը: Իրավապահ մարմինների մանիպուլատիվ գործողությունները խոչընդոտել և խոչընդոտում են Սարի թաղի բնակիչների հետ լրագրողի հետագա աշխատանքներին և ընդհանուր մասնագիտական գործունեությանը:

[9] ԶԼՄ-ների էթիկայի դիտորդ մարմնի փորձագիտական կարծիքը լրագրող Թեհմինե Ենոքյանի դիմումի վերաբերյալ [PDF]: (2017.10.16): 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://ypc.am/wp-content/uploads/2015/10/October-16_2017_arm.pdf:

Ինստիտուցիոնալ հոմոֆոբիա

2017-ի հուլիսին 14-րդ «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնի (ՄԿՓ) կազմակերպիչները փառատոնի ցուցադրումից հանեցին նախապես հաստատված «Լսիր ինձ. չպատմված պատմություններ ատելությունից անդին» վավերագրական և «Ծիրանի այգիներ» գեղարվեստական ֆիլմերը՝ ընդառաջ գնալով հոմոֆոբ դիրքորոշում ցուցաբերած գործընկերոջ՝ Կինոգործիչների միության՝ դահլիճ տրամադրելու պայմանին և չեղարկելով ֆիլմերը ներառող «Հայեր. հայացք ներսից և դրսից» ծրագիրը: Ըստ այդ պայմանի՝ Կինոգործիչների միությունը պատրաստ էր փառատոնի ֆիլմերի ցուցադրման դահլիճ տրամադրել, եթե փառատոնը ծրագրից դուրս թողներ ԼԳԲՏ մարդկանց խնդիրներին անդրադարձող վերոնշյալ ֆիլմերը: «Լսիր ինձ» ֆիլմի պատվիրատուն «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» (Փինք Արմենիա) իրավապաշտպան ՀԿ-ն է, որը ձգտում էր ֆիլմի ազատ ցուցադրությամբ կինոյի լեզվով Հայաստանի հանրությանը ներկայացնել ԼԳԲՏ մարդկանց խնդիրները և ապահովել նրանց հանրային տեսանելիությունն ու իրավունքների պաշտպանությունը: Արդյունքում, չեղարկելով ծրագիրը և կասեցնելով ֆիլմերի ցուցադրումը՝ «Ոսկե ծիրան» ՄԿՓ մեծ հարված հասցրեց Փինք Արմենիայի իրավապաշտպան գործունեությանը: Կինոգործիչների միության կողմից մերժված ֆիլմերի ցուցադրությունն այլ սրահներում կազմակերպելու «Ոսկե ծիրանի» անկարողությունը ցույց է տալիս, որ անգամ միջազգային համբավի հավակնող և Հայաստանում պետական կառույցների հետ սերտ համագործակցող կառույցներն անհետևողական են սեփական՝ հայտարարված արժեքային և քաղաքական ուղեգծերին, այն է՝ անխտրականությունը և տարբեր խմբերի առատ փորձի ներկայացումը[10]: Փառատոնը վայելում է ՀՀ արտաքին գործերի նախարարության և ՀՀ մշակույթի նախարարության, ինչպես նաև վերջին տարիներին պետական գործերին իր աճող միջամտությամբ հանդես եկող Հայ առաքելական եկեղեցու աջակցությունը: Եթե առաջին երկու հաստատությունները, չնայած իրավապաշտպանների կոչին, որևէ կերպ չարձագանքեցին միջադեպին, ապա Առաքելական եկեղեցին հանդես եկավ անթաքույց հոմոֆոբ դիրքորոշմամբ՝ հայտարարելով, թե իրենք են հորդորել «Ոսկե ծիրանին» չցուցադրել ԼԳԲՏ մարդկանց մասին պատմող ֆիլմերը[11]:

Հետագայում վերոնշյալ միջադեպին իր տված հարցազրույցում անդրադարձավ նաև ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը՝ արտահայտելով իրավաբանի գործունեությանը հակասող վերաբերմունք և Հայաստանում ԼԳԲՏ անձանց մարդու իրա-

[10] Ոսկե ծիրանի հռչակած նպատակների մասին տե՛ս փառատոնի կայքում: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.gaiff.am/hy/history:

[11] Մայր Աթոռն է հորդորել «Ոսկե ծիրանին» չցուցադրել ԼԳԲՏ անձանց մասին ֆիլմերը: (2017.07.13) Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/07/13:

վունքների պաշտպանությունը ստորադասող և մերժող դիրքորոշում[12]: Մի շարք ՀԿ-ներ, այդ թվում ՀՌՀ Երևանը, հորդորել էին ՀՀ փաստաբանների պալատին՝ ի դեմս Խորհրդի, ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ քննելու պալատի նախագահի վարքագծի կանոնների խախտման դեպքը և կարգապահական պատասխանատվության ենթարկելու հնարավորությունը[13]: Չնայած դրան՝ Զոհրաբյանի այս հայտարարությունը չարժանացավ Պալատի խորհրդի պատշաճ գնահատականին:

Փինք Արմենիայի իրավապաշտպան գործունեությունը դեռևս 2017 մայիսին բախվել էր անօրինական խոչընդոտման այս անգամ Երևանի քաղաքապետարանի կողմից: Քաղաքապետարանի կամայականության արդյունքում մայիսի 27-ին ապամոնտաժվեցին Փինք Արմենիայի պատվերով Երևան քաղաքի կենտրոնական հատվածներում տեղադրված սոցիալական գովազդի 3 վահանակները, որոնք միտված էին բարձրացնելու ԼԳԲՏ մարդկանց տեսանելիությունը և աջակցելու նրանց պաշտպանությանը: Վահանակները պետք է հանրային վայրում տեղադրված լինեին մայիսի 25-ից հունիսի 24-ը՝ համաձայն պատշաճ կնքված պայմանագրի: Այնինչ գովազդային պաստառները երեք օր անց հեռացվեցին տեղադրող կազմակերպության կողմից՝ անմիջականորեն Երևանի քաղաքապետարանի ցուցումով և սպառնալիքով: Այս գործով Փինք Արմենիան Երևանի քաղաքապետարանի դեմ հայց է ներկայացրել վարչական դատարան՝ քաղաքապետարանի գործողությունները հայցվորի արտահայտման ազատության և խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու և գովազդները վերականգնելու համար միջոցներ ձեռնարկելու պահանջով:

2017 թ. Փինք Արմենիան դիմել էր Մշակույթի նախարարություն՝ ԼԳԲՏ մարդկանց հանդեպ հանդուրժողականության թեմայով գովազդային պաստառները և տեսահոլովակները սոցիալական ճանաչելու նպատակով: Մշակույթի նախարարությունը մերժել է գովազդները սոցիալական ճանաչելու դիմումը՝ խտրական հիմնավորումով, թե հասարակությունը տեղեկացված է «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում ունեցող անձանց գոյության մասին, որ գովազդները որևէ հանրային կարևորության խնդրի չեն անդրադառնում և սոցիալական իրազեկման տարր չեն պարունակում: Փաստի առթիվ Փինք Արմենիան դիմել է վարչական դատարան՝ Մշակույթի նախարարության գործողությունները հայցվորի արտահայտման ազատության և խտրականությունից զերծ մնալու իրավունքներին միջամտող, ոչ իրավաչափ ճանաչելու և գովազդները սոցիալական ճանաչելուն պարտավորեցնելու պահանջով:

Երևանի քաղաքապետարանի առնչությունը ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանությունը խոչընդոտելուն դրսևորվել է նաև հուլիսի 3-ին, երբ «Իրավունքի կողմ» ՀԿ ներկայացուցիչների խոսքերով՝ կազմակերպության աշխատակիցների վրա հարձակում է տեղի ունեցել կազմակերպության գրասենյակի հարևանի կողմից, որը ներկայացել է իբրև

---

[12] Այլասերվածների և այլասերվածության մասին ֆիլմերի ցուցադրումը նաև անչափահասների շրջանում արգելված է օրենքով: (2017.07.13): 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://lawgroup.am/?p=7214:

[13] Հայտարարություն ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի 13-07-2017 թ. հարցազրույցի վերաբերյալ: (2017.07. 20): 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.pinkarmenia.org/hy/2017/07/ara-zohrabyan:

քաղաքապետարանի աշխատակից: Ըստ ՀԿ ներկայացուցիչների, հարևանը՝ Երևանի ավագանու ՀՀԿ խմբակցության և կուսակցության խորհրդի անդամ Նաիրա Նահապետյանը, սպառնացել է իրենց և հորդորել հնարավորինս շուտ փոխել գրասենյակի վայրը և հեռանալ, հակառակ դեպքում խոստացել է խնդիրներ ստեղծել ՀԿ-ի և իր շահառուների համար: ՀՌՀ Երևանի համար անորոշ է, թե որքանով է քաղաքապետարանն իբրև հաստատություն մասնակից Նահապետյանի նախաձեռնությանը:

ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանների թիրախավորում և սպառնալիքներ

ԼԳԲՏ մարդկանց իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ խոչընդոտները բացասական հետևանքներ են ունենում ոլորտի իրավապաշտպանների նկատմամբ հանրային կարծրատիպերի խորացման և ատելության խոսքի տարածման առումով: ԼԳԲՏ անձանց իրավունքները պաշտպանող իրավապաշտպան ՀԿ-ները և նրանց աշխատակիցները, մասնավորապես՝ իր ակտիվ գործունեությամբ հայտնի Փինք Արմենիան և դրա գործադիր տնօրեն Մամիկոն Հովսեփյանը պարբերաբար ատելության խոսք պարունակող տարաբնույթ անձնական նամակներ են ստանում Ֆեյսբուք սոցիալական ցանցով: Պետական կառավարման հաստատությունների հոմոֆոբ քաղաքականությունը նպաստում է համանման դիրքորոշումների հանրային տարածմանը և լեգիտիմացմանը: Այսպես, Փինք Արմենիայի կողմից տեղադրված ԼԳԲՏ անձանց տեսանելիությունը բարձրացնող սոցիալական գովազդի 3 վահանակները Երևանի քաղաքապետարանի կողմից 2017 թ. մայիսին կամայականորեն ապամոնտաժվելուց հետո Ֆեյսբուքում ատելության խոսքի տեղատարափ սկսվեց: Այդ թվում արձանագրվեցին գրասենյակի վրա հարձակման հանրային կոչեր Ֆեյսբուք սոցիալական ցանցի որոշ օգտատերերի կողմից: Այդ կոչերին էր միացել Միջազգային համագործակցության գերմանական խնայողական բանկերի հիմնադրամի (Sparkassenstiftung für internationale Kooperation e.V. Armenia) նախկին աշխատակից Տաթև Հովհաննիսյանը: Վերջինս, մասնավորապես, Ֆեյսբուքում նկարագրել էր Փինք Արմենիայի գրասենյակի հասցեն, որը կազմակերպությունը չի հանրայնացնում: Հովհաննիսյանը ավելի վաղ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) աշխատակիցների համար հանդիպում էր կազմակերպել Փինք Արմենիայի հետ, ինչի առիթով էլ այցելել էր կազմակերպության գրասենյակ և գիտեր դրա գտնվելու վայրը: Թեև հարձակում տեղի չունեցավ, այս կոչի հետևանքով կազմակերպությունը ստիպված էր մեկ շաբաթ գործել արտակարգ ռեժիմի պայմաններում:

Կանանց սեռական, վերարտադրողական և այլ իրավունքների պաշտպանության սահմանափակումներ

Համակարգային ճնշումներ

Սեռական ու վերարտադրողական իրավունքի պաշտպանները Հայաստանի պետական հաստատությունների և որոշ քաղաքական խմբավորումների կողմից ընկալվում են որպես սպառնալիք սոցիալական նորմերին, որոնք հիմնված են գենդերային անհավասար և խտրական կարծրատիպերի վրա: Ընդհանուր ռազմապաշտական քարոզչության և քաղաքականության պայմաններում վերարտադրողական իրավունքները, այդ թվում՝ աբորտի և ծննդյան հսկողության իրավունքները, բացարձակապես անտեսված են պետական մարմինների կողմից:

«Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ը (ԿՌԿ), որն ակտիվորեն աշխատում է սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքների ոլորտում, հայտնում է, որ պարբերաբար թիրախավորվում է ազգայնական խմբերի և Հայաստանի կառավարության կողմից: 2017 թ. Հայաստանում վերարտադրողական առողջության և իրավունքի վերաբերյալ գրեթե բոլոր հանդիպումների ժամանակ ԿՌԿ-ի ներկայացուցիչները, որոնք բարձրաձայնել են Հայաստանի ստանձնած միջազգային և ներպետական պարտավորությունների մասին, պետական պաշտոնյաների կողմից արժանացել են հակազդման և ագրեսիվ վերաբերմունքի: Պետական պաշտոնյաները և հաստատությունները համարժեք չեն արձագանքում կամ հաճախ անտեսում են կանանց իրավունքների պաշտպանների պահանջները՝ օրենսդրական մշակումների և քաղաքականության գործադրումների մակարդակներում՝ դրանով իսկ խոչընդոտելով կանանց իրավունքների պատշաճ պաշտպանությանը Հայաստանում: Այսպես, 2017-ին ընտանեկան բռնության կանխարգելման օրենքի նախագծի քննարկումներում բարձրաձայնած կարևոր հարցեր անտեսված մնացին, որի հետևանքով հատատված օրինագիծը շեղված է միջազգային իրավական սկզբունքներից և ունի բազմաթիվ բացթողումներ:

Կանանց իրավունքների պաշտպանների նկատմամբ թիրախավորում և սպառնալիքներ

Սեռական և վերարտադրողական առողջության և իրավունքի ոլորտում գործունեություն ծավալող իրավապաշտպանները չափազանց խոցելի են նաև հանրային դաշտում, քանի որ այս խնդիրները բարձրաձայնելու համար պարբերաբար ենթարկվում են ճնշումների պետական կառույցների և խտրական մշակույթ տարածող ռեակցիոն խմբերի կողմից: «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ համահիմնադիր Լարա Ահարոնյանն ու «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ հիմնադիր Մարո Մաթոսյանը վերջին տարիներին բազմիցս հայտնվել են ատելության խոսքի, անձի արժանապատվությունը և գործունեությունը նսեմացնող հայտարարությունների թիրախում՝ պայմանավորված իրենց իրավապաշտպան գործունեությամբ: Ահարոնյանի և Մաթոսյանի դեմ հերթական թիրախավորող տեսահոլովակը տարածվել է 2017 հունիսի 30-ին Ֆեյսբուք սոցիալական ցանցում բացված

հակահիրավապաշտպան և ՌԴ ստվերային աջակցությամբ հակաեվրոպական քարոզչություն իրականացնող էջերից[14] մեկի կողմից, որում պարբերաբար տարածվում են կին իրավապաշտպանների հանդեպ ատելության խոսք պարունակող գրառումներ, թիրախավորող լուսանկարներ և տեսահոլովակներ: Ահարոնյանն ու Մաթոսյանը հայտնի են որպես ընտանեկան բռնության դեմ օրենքի ընդունման, ԼԳԲՏ+ մարդկանց հանդեպ խտրականության դեմ և կանանց սեռական ու վերարտադրողական իրավունքների պաշտպանության ակտիվ ջատագովներ:

2017 թ. նոյեմբերին՝ Հայաստանում ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի քննարկումների շրջանում, ռեակցիոնիստ խտրական անհատները և խմբերը կրկին ակտիվացրին ատելության խոսքի, վիրավորանքների և ապատեղեկատվության տարածման պրակտիկաները օրենքի ընդունման ջատագով իրավապաշտպանների նկատմամբ: Այս ընթացքում նրանցից ոմանք կեղծ տեղեկություն տարածեցին «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի առաքելության և գործունեության վերաբերյալ: Ֆեյսբուքյան գրառումներից մեկում օգտատերը, մեղադրելով ԿՌԿ-ին պետությունը ոչնչացնելու և քաղաքացիների ընտանիք ներխուժելու մեջ, գրառման վերջում դիմում է ազգային անվտանգության մարմիններին՝ խնդրելով ուսումնասիրել և «համապատասխան գործողություններ ձեռնարկելու» նրանց դեմ: Գրառման հետ նաև կցված են ԿՌԿ-ի համահիմնադիր Լարա Ահարոնյանին անձնապես մատնացույց անող և թիրախավորող լուսանկարներ[15]:

Գործունեությամբ պայմանավորված թիրախավորման կապակցությամբ ԿՌԿ-ն դեռ 2012-ին քաղաքացիական հայցով դիմել է դատարան՝ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման պահանջով: Թեև կազմակերպության տվյալ հայցը բավարարվել էր, սակայն պետությունն առ այսօր գործնական քայլեր չի կատարում ՀՀ-ում կանանց իրավունքների պաշտպանների սատարման, նրանց՝ խտրականությունից և բռնությունից զերծ մնալու իրավունքի լիարժեք և ինստիտուցիոնալ մեխանիզմներով իրացման ուղղությամբ: Վերջին տարիներին Հայաստանում կազմակերպված ռեակցիոն խմբերը շարունակում են թիրախավորել իրավապաշտպաններին՝ անպատիժ մնալու վստահությամբ՝ ըստ էության իրենց թիկունքում ունենալով իրավապահ մարմինների թաքուն աջակցությունը:

Սպառնալիքի կոչերը և հայհոյանքները պարբերական բնույթ են կրում նաև ՀԿ-ների կողմից կանանց տրամադրվող իրավաբանական, հոգեբանական և այլ աջակցությունների հետևանքով: Մասնավորապես, «Կանանց աջակցման կենտրոն» ՀԿ (ԿԱԿ) անձնակազմը պարբերաբար թիրախավորվում է, ենթարկվում սպառնալիքների ու ճնշումների ընտանեկան բռնության ենթարկված իրենց շահառու կանանց ամուսինների, զուգընկերների և ընտանիքի անդամների կողմից: ԿԱԿ անձնակազմը մշտապես գործում է իր աշխատակիցների (հիմնականում կին իրավապաշտպաններ, իրավաբաններ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ) կյանքի և առողջության համար վտանգավոր մթնոլորտում, սակայն դրա հետ

---

[14] Ընտանեկան բռնության կանխարգելման օրինագծի դեմ պայքարողները ֆինանսավորվում են ՌԴ-ից: (2016.12.24) Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2016/12/24:

[15] Խոջաբաղյան Զ. [zakar.khojabaghyan]: (2017.10.13): Որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի, Ազգային Անվտանգության և այլ համապատասխան կառույցների ուշադրությունն եմ հրավիրում [ֆեյսբուքյան գրառում]: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://web.facebook.com/zakar.khojabaghyan/posts/1679251902094228:

կապված գործուն պաշտպանիչ քայլեր ՀՀ ոստիկանության կողմից չեն գործադրվում: Հաճախ նկատելի է ուժային կառույցների կողմից տղամարդ ամուսինների հանդեպ հովանավորչական վերաբերմունք, նրանց բռնարարքների հանդուրժում և կանանց կարիքներին անհամարժեք արձագանք:

Այսպես օրինակ, 2017 թվականի մայիսին ԿԱԿ-ի շահառու Նաիրա Սմբատյանի ամուսին Արա Խաչատրյանն արգելափակել էր ԿԱԿ-ի աշխատակիցների մեքենան, երբ վերջիններս Սմբատյանի հետ միասին դուրս էին գալիս դատարանի շենքից՝ նրանց ամուսնալուծության գործի հերթական լսումից հետո[16]: Իրավապաշտպաններն ահազանգեցին ոստիկանություն, սակայն մինչ ոստիկանների ժամանումը Խաչատրյանի ահազանգով դեպքի վայր ժամանեցին ՀՀ ոստիկանության կազմակերպված հանցագործությունների գլխավոր վարչության հետախույզները, որոնք Սմբատյանի՝ հետախուզման մեջ գտնվելու պատրվակով (վերջինս համարվում էր իբրև անհայտ կորած անձ) հարձակվեցին ԿԱԿ-ի մեքենայի վրա: ԿԱԿ աշխատակիցները և շահառու Սմբատյանը ստիպված են եղել մեքենայում կողպված սպասել ոստիկանությանը: Վերջապես դատարանի շենք ժամանած ոստիկանները ուղեկցել են ԿԱԿ իրավապաշտպաններին և շահառու Սմբատյանին Ոստիկանության Մալաթիայի բաժին՝ վերջինիս հետախուզությունից հանելու դիմում ներկայացնելու: Նույն վայր ժամանած Խաչատրյանը հրաժարվել է մտնել ոստիկանության շենք և ցուցմունք տալ, շարունակել է մնալ ոստիկանության շենքի տարածքում՝ արգելափակելով ԿԱԿ-ի մեքենան և հնչեցնելով սպառնալիքներ ԿԱԿ-ի աշխատակիցների հասցեին: Մալաթիայի ոստիկանության բաժնի պետը ժամեր շարունակ հրաժարվել է գործողություն կատարել Խաչատրյանի սպառնալից վարքը զսպելու ուղղությամբ՝ փոխարենը նախընտրելով հետնամուտքով դուրս բերել և իր տրամադրած մեքենայով ոստիկանական բաժանմունքից տեղափոխել ԿԱԿ-ի աշխատակիցներին և Սմբատյանին:

Կանանց իրավունքներով և խնդիրներով մտահոգ առանձին կին ակտիվիստներ և/կամ գործիչներ ևս պարբերաբար ենթարկվում են թիրախավորումների և սպառնալիքների: 2017 թ. մի շարք ֆեմինիստներ առավելապես թիրախավորվեցին Երևանում տեղի ունեցած մարտիության երթից հետո: Մասնակիցների նկատմամբ հակաքարոզարշավ էր նախաձեռնվել Ֆեյսբուք սոցիալական ցանցում հնչել են բազմապիսի վիրավորանքներ, սեռական բնույթի հայհոյանքներ և սպառնալիքներ, «ազգի թշնամի» շարքի պիտակավորումներ: Երթի ընթացքում միջամտություններ են եղել ազգայնական խմբերի ներկայացուցիչների կողմից, որոնք առավելապես թիրախավորել են երթի մասնակից տրանսգենդեր կանանց: «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության» կոալիցիայի ներկայացուցիչ Զարուհի Հովհաննիսյանը ևս հայտարարել է 2017-ին Ֆեյսբուք սոցիալական ցանցով ատելության խոսք և հայհոյանքներ պարունակող տարաբնույթ անձնական նամակներ ստանալու մասին:

[16] «Ոստիկանությունը չաստնի ախրանա չի». իրավապահները չեն կարող կնոջը պաշտպանել ամուսնուց: (2017.05.26) Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/05/26:

Պաշտոնատար անձանց իրավախախտման դեպքերի բարձրաձայնման հետևանքով վրեժխնդրություն, կյանքի և առողջության սպառնալիքներ

Արդար դատաքննության իրավունքի խախտումներ

«Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանի նկատմամբ հարուցված քրեական գործը նախ բացվել և կարճվել էր 2015-ին, ապա վերաբացվել 2016-ին՝ ուղեկցվելով բազմաթիվ օրինախախտումներով: 2017-ին գործը վարույթ է ընդունվել Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում՝ չնայած դրա անօրինականության մասին Պողոսյանի փաստաբանի բողոքներին: 2017-ի հունվար-մայիս ամիսներին ՀՌՀ Երևանը նախաձեռնել է գործի լսումների տեղական և միջազգային դիտորդություն, անօրինական է համարել Արաբկիրի դատարանի կողմից գործի քննությունը: Առաջին դատական նիստին փաստաբանի միջնորդության արդյունքում և դիտորդների ներկայության պայմաններում է միայն հնարավոր դարձել վարող դատարանի փոփոխության մասին որոշումը: Դիտորդության ընթացքում ՀՌՀ Երևանը մտահոգություն է հայտնել ամբաստանյալին և իր փաստաբանին առանց պատշաճ ծանուցելու դատական նիստերի նշանակման մասին[17]: Թեև ՀՌՀ Երևանն ավարտել է Պողոսյանի գործի դիտորդությունը, սակայն հրապարակումներից տեղեկացել է, որ, ըստ Պողոսյանի, իր դեմ հարուցված քրեական գործի և իր հայցի դատավարական գործընթացներում շարունակվում են անօրինականությունները, և խախտվում է իր անմեղության կանխավարկածը:

Քաղաքացիների հանդեպ բռնաճնշումների դեմ պայքարի խոչընդոտում

2017-ի հունիսի 2-ին Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը ֆեյսբուքյան իր էջի գրառումներից մեկի ներքո ստացել է սպանության սպառնալիք Աշոտ Ավանեսյան անվամբ օգտատիրոջ կողմից: Իր գրառումով իրավապաշտպանը քննադատել էր Հայաստանի կառավարությանը Մարտի 1-ի սպանությունների, բազմաթիվ ապօրինությունների, անարդարությունների և համակարգի դեմ դուրս եկած քաղաքացիներին ճնշելու առիթով: Նշված սպառնալիքին հաջորդել է այլ սպառնալիք ֆեյսբուքյան մեկ այլ օգտատիրոջից: Հունիսի 5-ին Սաքունցը սպանության սպառնալիքների մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն: Ավելի ուշ Սաքունցին ճանաչել են տուժող, իսկ ֆեյսբուքյան օգտատիրոջ ինքնությունը այդպես էլ չի պարզվել, չնայած, ըստ ՀՀ քննչական կոմիտեի, ինքնությունը պարզելու համար ձեռնարկվել են բոլոր

---

[17] Human Rights House Yerevan [HRHYerevan]: (2017.02.20): Փետրվարի 17-ի առավոտյան ժամը 9:23-ին «Վելես» իրավապաշտպան ՀԿ նախագահ Մարինա Պողոսյանը հեռախոսազանգով տեղեկացվել է, որ իր նկատմամբ հարուցված քրգործի դատական երկրորդ նիստը տեղի է ունենալու նույն օրը ժամը 10:00-ին [ֆեյսբուքյան գրառում]: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://web.facebook.com/HRHYerevan/posts/1222043111164176:

անհրաժեշտ գործողությունները: Սաքունցը հայտնել է, որ գոհ չէ քննության ընթացքից[18]: Հարուցված քրեական գործով զարգացումներ չկան, նախաքննությունը շարունակվում է՝ Երևանից տեղափոխվելով Քննչական կոմիտեի Լոռու վարչություն: Առայժմ իրավապաշտպանի հանդեպ սպանության սպառնալիքի մասով իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված քայլերն անարդյունավետ են, և դա բացասաբար է անդրադառնում ինչպես Սաքունցի, այնպես էլ առհասարակ իրավապաշտպանների ապահով գործունեության վրա:

[18] Արթուր Սաքունցին սպանության սպառնալիք հղած «Ֆեյսբուքի» օգտատիրոջ ինքնությունը դեռևս չի պարզվել: (2017.07.14): 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://hcav.am/events/14-7-17-5/:

Բնապահպանների նկատմամբ ճնշումներ և գործունեության սահմանափակումներ

Ինստիտուցիոնալ գործունեության և actio popularis-ի սահմանափակումներ

2017-ին շարունակվել են 2016-ից նկատելի դարձած ճնշումները բնապահպանների նկատմամբ՝ նրանց գործունեությունը քաղաքականությունների մշակման և որոշումների կայացման մակարդակում խոչընդոտելու նպատակով: Մասնավորապես, «Էկոիրավունք» ՀԿ նախագահ, բնապահպան Արթուր Գրիգորյանը հայտնում է, որ «Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն[19] (ԶՊՄԿ) և դրա հետ փոխկապակցված Սյունիքի մարզ-պետ Վահե Հակոբյանը խոչընդոտում են իր և իր գործընկեր բնապահպանների գործու-նեությունը հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկության և հաշվետվողականու-թյան հարցերում միջազգային չափանիշներ առաջադրող Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) շրջանակներում: Ըստ Գրիգորյանի՝ իր ձեռքի տակ եղած և մասնակիորեն հրապարակված փաստերը վկայում են Սյունիքի մարզպետ Հակոբյանի անձնական և գործնական փոխկապակցվածությունը ինչպես ԶՊՄԿ-ի, այնպես էլ «Սիվիլ Վոյս» ՀԿ-ի ու «Հանրային Դիվանագիտություն» բարեգործական ՀԿ-ի (որ նույնն է՝ Paradiplomacy, հայտնի է para.tv մեծբյուջետային կայքով) հետ, որոնց միջոցով էլ, Գրիգորյանի խոսքերով, կաթվածահար է արվում ԱՃԹՆ Բազմաշահառու խմբում (ԲՇԽ) քաղաքա-ցիական հասարակության անդամների աշխատանքը: Նշված հանքարդյունաբերական բիզնես շահերի հետ փոխկապված ՀԿ-ները ձգտում են ԲՇԽ աշխատանքային խմբից դուրս մղել հանքարդյունաբերության ոլորտում կոռուպցիոն ռիսկերի վերաբերյալ կոշտ հարցեր բարձրացնող անձանց՝ վերջիններիս ԶՊՄԿ-ի և «Քրոնիմետ» հիմնադրամի հետ գործարքային կապեր վերագրելով և դրանով շահերի բախման իմիտացիա ստեղծելով: Այնինչ, ըստ Գրիգորյանի, «Հանրային Դիվանագիտություն» ՀԿ-ն ղեկավարվում է Սյունիքի մարզպետ Հակոբյանի կնոջ՝ Էլիզաբեթ Պետրոսյանի կողմից, իսկ Հակոբյանը մինչ մարզպետ նշանակ-վելը հանդիսացել է ԶՊՄԿ-ի ադմինիստրատիվ տնօրեն և նույն ընկերության գլխավոր տնօրենի առաջին տեղակալ: Մարզպետ նշանակվելուց հետո Հակոբյանը հայտարարել է «Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամի» հանրային միջոցները մասնավոր հանքարդյունաբերական ընկերություն հանդիսացող ԶՊՄԿ-ին կից հիմնադրամին տրամադրելու մասին՝ դրանով իսկ իր պաշտոնեական լիազորություններն անցնելու կասկածներ առաջացնելով: Ընդ որում, լինելով մարզպետ, Հակոբյանը նաև ԶՊՄԿ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահն էր՝ համաձայն իր 2016-ի տարե-վերջյան հայտարարության: Բնապահպան Գրիգորյանի խոսքերով՝ պետական մարմին հանդիսացող Սյունիքի մարզպետարանի վարչական ռեսուրսի ուղղակի կիրառմամբ և ԶՊՄԿ-ի ֆինանսական միջոցների օգնությամբ ճնշում է գործադրվում անկախ բնապահպանների նկատմամբ: Արթուր Գրիգորյանի և Ինգա Զարաֆյանի նկատմամբ (երկուսն էլ ԲՇԽ անդամ են) հանրային մեղադրանքները տարածվել են դեռևս 2016-ին

[19] Ավելի քան 60% բաժնետերը գերմանական «Քրոնիմետ մայնինգ» ընկերությունն է:

անհայտ անձանց կողմից ֆեյսբուքյան փակ խմբում անիմացիոն հոլովակ տարածելու միջոցով: Ոստիկանությունը 2016-ին հրաժարվել էր Գրիգորյանի դիմումի համաձայն վարույթ հարուցել և պարզել հոլովակի հեղինակներին՝ համապատասխան մեխանիզմի բացակայության հիմնավորումով[20]:

2017-ի հուլիսին Արթուր Գրիգորյանը հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ խնդրելով պարզել Սյունիքի մարզպետ Հակոբյանի առնչությունը վերոնշյալ հասարակական կազմակերպությունների և անհատ անձանց դեմ կազմակերպված վարկաբեկող անիմացիոն հոլովակի նկարահանման և տարածման հետ[21]: Նշված հաղորդմամբ ներկայացվել էր նաև տեղեկատվություն Սյունիքի մարզպետի կողմից հնարավոր ֆինանսական չարաշահումների վերաբերյալ՝ նրա վերահսկողության տակ գտնվող երկու հիմնադրամների՝ «Սյունիքի զարգացման և ներդրումների հիմնադրամի» և «ՀՊՄԿ բարեգործական հիմնադրամի» միջև անօրինական ֆինանսական գործարքներ իրականացնելու միջոցով: Գլխավոր դատախազությունը, սակայն, հրաժարվել էր հաղորդման հիման վրա քրեական գործ հարուցել[22], ինչը Գրիգորյանը բողոքարկել է դատական կարգով[23]: Ըստ Արթուր Գրիգորյանի՝ սա պաշտոնյայի հանդեպ բացահայտ հովանավորչություն է այն պայմաններում, երբ բնապահպանների նկատմամբ համակարգված ճնշում է կիրառվում: Ճնշման դրսևորվումներից է հանքարդյունաբերության ոլորտում կոռուպցիայի և անպատասխանատու գործունեության հարցերով զգայուն խնդիրներ բարձրացնող մարդկանց մասին զրպարտող արշավներ կազմակերպելը:

Արձագանքելով Գրիգորյանի կողմից ՀՀ գլխավոր դատախազությանը ներկայացրած դիմումին՝ Սյունիքի մարզպետ Հակոբյանը 2017-ին հայց էր ներկայացրել Գրիգորյանի, ինչպես նաև նրա ներկայացրած փաստերը լուսաբանած aravot.am, epress.am և syuniacyerkir.am կայքերի դեմ: Հակոբյանը պնդում է, որ իրեն զրպարտել են, և Գրիգորյանից պահանջում է 2 միլիոն դրամ, ինչպես նաև բոլոր պատասխանողներից պահանջում է հերքել իր մասին հրապարակած տեղեկատվությունը: 2017-ի նոյեմբերին՝ գործով դատական առաջին նիստին, պարզ դարձավ, որ հայցվոր կողմը aravot.am-ի նկատմամբ ներկայացված հայցից հրաժարվել է՝ ինչպես հետագայում պարզվեց խնդրո առարկա հոդվածը aravot.am կայքից հեռացնելու պայմանը բավարարելու արդյունքում[24]:

---

[20] Human Rights House Yerevan [HRHYerevan]: (2017.08.14) : Հայտարարություն Իրավապահ մարմինները հրաժարվում են բնապահպան Արթուր Գրիգորյանի դիմումին պատշաճ ընթացք տալ [ֆեյսբուքյան նոթ]: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://web.facebook.com/pg/HRHYerevan/notes/?ref=page_internal:

[21] Գլխավոր դատախազից խնդրում են պարզել՝ արդյոք բնապահպանների դեմ արշավը կազմակերպել է Սյունիքի մարզպետը: (2017.07.31): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/07/31:

[22] Human Rights House Yerevan [HRHYerevan]: (2017.08.14) : Հայտարարություն Իրավապահ մարմինները հրաժարվում են բնապահպան Արթուր Գրիգորյանի դիմումին պատշաճ ընթացք տալ [ֆեյսբուքյան նոթ]: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ https://web.facebook.com/pg/HRHYerevan/notes/:

[23] 2018-ի հունվարին Վերաքննիչ դատարանը մերժել է Սյունիքի մարզետ Վ. Հակոբյանի դեմ վարույթ բացելու Ա. Գրիգորյանի հայցը. այս մասին հանգամանալից կներկայացվի ՀՌՀ Երևանի 2018 հաշվետվության մեջ:

[24] «Առավոտը» պլստաց Սյունիքի մարզպետի հայցից: (2017.11.30): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ ՝ http://epress.am/2017/11/30:

2017 թ. օգոստոսի 30-ին Հայաստանի վարչական դատարանի դատավոր Կարեն Զարիկյանը «Էկոիրավունք» և «Էկոդար» բնապահպանական ՀԿ-ներին զրկել է Վարչական դատարանում Ամուլսարի հանքի շահագործման աղմկահարույց ծրագրի դեմ դատական գործընթացում հայցվոր լինելու իրավունքից: Մինչ այդ՝ 2015-ի ապրիլից սկսած, Էկոիրավունքը և Էկոդարը, ազդակիր Գնդեվազ համայնքի մոտ 12 բնակիչների հետ միասին, վիճարկում էին Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման թույլտվությունը, որ տրամադրվել էր «Լիդիան Արմենիա» ընկերությանը: Շուրջ երկու տարի անց բնապահպանական ՀԿ-ներին հայցվորների շարքից հանելու որոշումը դատավորը կայացրել է՝ բավարարելով «Լիդիան Արմենիա»-ի ներկայացուցչի միջնորդությունը և հղում կատարելով ՀԿ-ների մասին նոր օրենքի սահմանափակումներին[25]: ՀԿ-ների մասին նոր օրենքը ուժի մեջ է մտել 2017-ին, որն Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեի առաջարկություններին համաձայն պետք է ամրագրեր բնապահպանական հարցերով զբաղվող ՀԿ-ների դատական մատչելիության իրավունքը՝ հանրային շահերի պաշտպանության հիմքով դատական հայցեր ներկայացնելու հարցում (actio popularis սկզբունք): Մինչ այդ, թեև իրավունքը հստակորեն ամրագրված չէր, դատավարական պրակտիկայում ձևավորված նախադեպի ուժով ՀԿ-ները հաջողել էին իբրև հայցվոր կողմ հանդես գալ դատարանում: Իսկ 2017-ին ընդունված օրենքը, որ պետք է ուժեղացներ բնապահպան ՀԿ-ների դատական մատչելիության իրավական հիմքերը, փաստացի բազմաթիվ սահմանափակող պայմաններ է առաջադրել, որոնց կամայական մեկնաբանությունն էլ հիմք է ծառայել դատավոր Զարիկյանի որոշման համար: Էկոիրավունքի նախագահ Արթուր Գրիգորյանը բնապահպան ՀԿ-ներին հայցվոր լինելու իրավունքից զրկելու հարցը սեպտեմբերին կրկին ներկայացրել է Օրհուսի կոնվենցիայի Համապատասխանության կոմիտեին[26] և պահանջել Հայաստանի կառավարության նկատմամբ կիրառել ավելի կոշտ միջոցներ: Բացի դրանից՝ Էկոիրավունքը և Էկոդարը բողոքարկել են դատավորի որոշումը Վարչական վերաքննիչ դատարանում: Դատական գործընթացը շարունակվում է:

Կին բնապահպանի նկատմամբ վիրավորանք և ճնշում

Իր պայքարի շրջանակներում բազմիցս թիրախավորվել է նաև «Հայկական բնապահպանական ճակատի» (ՀԲՃ) անդամ Անի Խաչատրյանը: Խաչատրյանի նկատմամբ վիրավորանքներ են հնչեցվել անգամ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից: Ամուլսարի հանքի վերաբերյալ Խաչատրյանի ֆեյսբուքյան հարցադրումներին ի պատասխան՝ նախարարությունը՝ հանձին հասարակության հետ կապերի բաժնի ղեկավար Արծրուն Պեպանյանի, 2017 թ. դեկտեմբերին հրաժարվել է պատշաճ արձագանքել՝ սեքսիստական (գենդերային հիմքով խտրական) հռետորաբանությամբ կոչ անելով նրան «շոր հագնել», որից հետո միայն Բնապահպանության նախարարությունը կպատասխանի հարցերին:

---

[25] Դատարանը ՀԿ-ներին արգելեց մասնակցել Ամուլսարի ծրագրին վերաբերող դատական գործընթացին: (2017.08.30): Epress.am: 2018.03.13-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://epress.am/2017/08/30:

[26] Comment of representative of Armenian environmental NGO "Ecological Right" Artur Grigoryan during the 6th Meeting of the Parties of the Aarhus Convention [PDF]: (2017.09): 2018.13.03-ի դրությամբ հասանելի է այստեղ՝ http://www.unece.org/fileadmin/DAM/env/pp/mop6/Statements_and_Comments/MOP-6_7b_ECORIGHT_comment_on_the_compliance_mechanism.pdf:

Ամփոփ գնահատական

ՀՌՀ Երևանն արձանագրում է, որ ՀՀ կառավարությունը և պետական հաստատությունները, հակառակ ՀՀ քաղաքացիների և միջազգային գործընկերների հանդեպ ստանձնած պարտավորությունների, ոչ միայն չեն աջակցում, այլև համակարգային կերպով խոչընդոտում են երկրում մարդու իրավունքների պաշտպանությանը՝ դատաիրավական, ՏԻՄ և կառավարական (նախարարությունների, մարզպետարանների) ու ոչ կառավարական հաստատությունների միջոցներով:

Պետական մարմիններն ավելացրել են հատկապես անկախ փաստաբանների, լրագրողների/ԶԼՄ-ների և բնապահպանների գործունեության խոչընդոտները: Միաժամանակ սովորական պրակտիկա է դարձել իրավապաշտպանների և ակտիվիստների թիրախավորումները, նրանց նկատմամբ սպառնալիքները (քաղաքական քննադատների լռեցման ձգտումը և ՌԴ ստվերային աջակցությամբ ուղղորդվող հակաիրավապաշտպան պրոպագանդայի կիրառումը ԼԳԲՏ անձանց ու կանանց իրավունքների պաշտպանների հանդեպ):

Վերոնշյալ բոլոր խոչընդոտները և թիրախավորումները լրացուցիչ հիմնավորումն են Հայաստանում իրավապաշտպանների գործունեության խիստ անհրաժեշտության: Դրանք չեն արտամղում իրավապաշտպաններին իրենց ստանձնած գործունեության ոլորտից: Թիրախավորողները և խոչընդոտ առաջացնողները, սակայն, անպատիժ մնալով, կարող են, ի վերջո ավելի մեծ ռիսկեր հարուցել իրավապաշտպանների արդյունավետ գործունեության, ինչպես նաև նրանց կյանքի և առողջության ապահովության առումով:

ՀՌՀ Երևանը ՀՀ կառավարությունից և պետական հաստատություններից պահանջում է հանրայնորեն աջակցել ՀՀ-ում իրավապաշտպանների ապահով գործունեությանը և արդյունավետ քայլեր իրականացնել առկա խոչընդոտների հաղթահարման ուղղությամբ:

Դեպքերի գնահատականներ

ՀՌՀ Երևանը համարում է, որ իրավապաշտպաններին և ակտիվիստներին առնչվող գործերը վարող հայաստանյան դատարաններն ու դատախազները 2017-ին քանիցս օրինախախտումներ են իրականացրել: Ըստ այդմ, իրավապաշտպանության ջատագովների արդար դատաքննության իրավունքը և նրանց հայցերի արդարացի քննությունը երաշխավորված չեն:

ՀՌՀ Երևանը քաղաքական և հանրային նշանակության գործերով փաստաբանների հանդեպ դատարանների 2017-ին նախաձեռնած ընտրողական խուզարկումները գնահատում է իբրև կողմերի հավասարության սկզբունքի բացահայտ խախտում և քաղաքական ու հանրային նշանակության գործեր վարող փաստաբանների վրա ճնշման փորձ: ՀՌՀ Երևանը կասկածներ է հայտնում, որ դատարանները աչառու որոշումներ են կայացնում քաղաքական և հանրային նշանակության գործեր վարող փաստաբանների այլ գործերի առնչությամբ՝

հնարավոր վրեժխնդրությունից ելնելով:

ՀՌՀ Երևանը խիստ մտահոգված է Հայաստանի վարչական դատարանի որոշման կապակցությամբ, ըստ որի՝ բնապահպան ՀԿ-ները փաստացի զրկվել են հանքարդյունաբերական խնդիրներին վերաբերող գործով հանրային շահերը դատարանում պաշտպանելու իրավունքից (actio popularis): Այս որոշումը կարող է նախադեպային լինել բնապահպանական չարաշահումների և ապօրինությունների դեմ նաև հետագա գործերում ՀԿ-ների կողմից հանրային շահերը պաշտպանելու հնարավորությունները սահմանափակելու համար:

ՀՌՀ Երևանը տարակուսանք է հայտնում իրավապահ մարմինների նախաքննության վարույթի դանդաղաշարժության, անարդյունավետության և իրավախախտների բացահայտման անհամարժեք կամք և ջանքեր ներդնելու առնչությամբ բոլոր այն դեպքերում, երբ գործերն առնչվում են՝

- փաստաբանների (տե՛ս էջ 6),
- լրատվամիջոցների ներկայացուցիչների (տե՛ս էջ 8),
- իրավապաշտպանների (տե՛ս էջ 12, 15 և 18),
- բնապահպանների (տե՛ս էջ 20)

դիմումներին և պահանջներին՝ դրանց հիմքում Հայաստանում իրավապաշտպանությանը գործնական խոչընդոտում տեսնելով: ՀՌՀ Երևանը քննադատում է իրավապահ մարմինների ձեռնպահ վերաբերմունքը և փաստացի հրաժարումը ուսումնասիրել իրավապաշտպանների ու ակտիվիստների բարձրաձայնած խնդիրները, ներկայացված բոլոր փաստերը և դրվագները, իրականացնել նրանց դիմումների լիարժեք և օբյեկտիվ քննություն:

ՀՌՀ Երևանը փաստում է, որ բազմաթիվ պետական և դրանց առնչվող (մերձպետական) հաստատություններ խրախուսում են ազգային/կրոնական հիմքով խտրական մշակույթը, ինչպես նաև մերժում են կանանց իրավահավասարությունը, դրսևորում են հոմոֆոբ վարք: Վերջիններս ՀՀ Սահմանադրությանը և միջազգային իրավունքին հակասող գործողություններ են իրականացնում: Պետական և կառավարող մարմինները հաճախ հովանավորում են անհատների, խմբերի և լրատվամիջոցների, որոնք բացահայտորեն դեմ են կանանց հավասարությանը կամ տարածում են վերարտադրման և ընտանեկան դերերի վերաբերյալ գենդերային կարծրատիպային տեսակետներ, ձգտում են լռեցնել կին ակտիվիստներին, ինչպես նաև կանանց և ԼԳԲՏ անձանց իրավախախտումների մասին բարձրաձայնող իրավապաշտպաններին:

Մասնավորապես.

- ՀՌՀ Երևանը արձանագրում է, որ Երևանի քաղաքապետարանը կողմնակալ, խտրական և անօրինական գործունեություն է ցուցաբերել՝ նպաստելով ԼԳԲՏ մարդկանց տեսանելիության բարձրացմանը միտված պաստառների ապամոնտաժմանը: Դրանով խախտվել են ՀՀ Սահմանադրության և միջազգային իրավունքի պահանջները, խրախուսվել է հոմոֆոբիայի տարածումը երկրում, խոչընդոտվել ԼԳԲՏ

անձանց իրավունքները պաշտպանող Փինք Արմենիա ՀԿ-ի աշխատանքը, իսկ քաղաքապետարանի ավագանու անդամներից մեկի կողմից՝ «Իրավունքի կողմ» ՀԿ-ի աշխատանքը.

- ՀՌՀ Երևանը քննադատում է «Ոսկե ծիրան» ՄԿՓ անկարողությունը՝ հետևել ոչ խտրականության և իրավահավասարության սկզբունքներին, ինչպես նաև անհանդուրժելի է համարում Կինոգործիչների միության և դրա ղեկավար անձնակազմի հոմոֆոբ կեցվածքը.

- ՀՌՀ Երևանը դատապարտում է Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանի հոմոֆոբ դիրքորոշումներ պարունակող հանրային արձագանքը «Ոսկե ծիրան» ՄԿՓ միջադեպին.

- ՀՌՀ Երևանը դատապարտում է ՀՀ արտգործնախարարությանը և ՀՀ մշակույթի նախարարությանը իրենց հետ համագործակցող «Ոսկե ծիրան» փառատոնից 2017-ին ԼԳԲՏ անձանց խնդիրների շուրջ ֆիլմերի ցուցադրման կասեցումը հանրայնորեն չդատապարտելու համար: Իրավասու նախարարությունների այսպիսի անտարբեր կեցվածքը խրախուսում է արվեստի ոլորտում և ավելի լայն մշակույթում խտրականությունը, ազատ արտահայտման իրավունքի և մշակութային բազմազանության արտահայտման սահմանափակումները և Հայաստանում հոմոֆոբիայի հետագա տարածումը.

- ՀՌՀ Երևանը քննադատում է ՀՀ բնապահպանության նախարարությանը և իր հասարակության հետ կապերի բաժնի ղեկավար Արծրուն Պեպանյանին՝ կին բնապահպանի առաջադրած հարցադրումներին հասցեագրող պատասխանի փոխարեն գենդերային հիմքով խտրական (սեքսիստական) վարք դրսևորելու առիթով.

- ՀՌՀ Երևանը դատապարտում է Հայ առաքելական եկեղեցու խտրական քաղաքականությունը և դրանից բխող հանրային կյանքին միջամտությունները, ինչպես նաև կոչ է անում վերանայել իր կողմից մարդկանց որոշ խմբերի նկատմամբ ատելության քարոզն ու դրա տարածման քաղաքականությունը.

- ՀՌՀ Երևանը նաև ահազանգում է միջազգային և եվրոպական կազմակերպություններում և դրանց տեղական գրասենյակներում կնատյաց և հոմոֆոբ տեղացի աշխատակիցներ ունենալու մասին, որոնց գործունեությունը բացասական ազդեցություն է ունենում Հայաստանում իրավապաշտպանության և ոլորտի ներկայացուցիչների պաշտպանվածության վրա:

ՀՌՀ Երևանի պահանջներ

Ելնելով վերոնշյալ գնահատականներից՝ ՀՌՀ Երևանը պահանջում է.

- ՀՀ **դատարաններից** օրինականության շրջանակներում ապահովել իրավապաշտպանների արդար դատաքննության իրավունքը, նրանց հայցերի պատշաճ քննությունը, փաստաբանների անկաշկանդ և երաշխավորված անկախությամբ գործելու պայման-

ները, բացառել փաստաբանների հետագա խուզարկումները և սանկցիաներով նրանց պատժելու ձգտումները, պատշաճորեն ապահովել բնապահպանների հանրային շահերի պաշտպանության հիմքով դատական հայցեր ներկայացնելու իրավունքը (actio popularis).

- ՀՀ **արդարադատության նախարարությունից և ԱԺ-ից** օրենսդրական փոփոխություններ նախաձեռնել՝ ապահովելու փաստաբանների անկաշկանդության և անկախության սկզբունքի անխափան իրավական հիմքերը, ինչպես նաև իրավապաշտպանների և հանրային շահի պաշտպանների կողմից ազատորեն և միանշանակորեն actio popularis-ը գործադրելու իրավական հիմքերը.

- **Իրավապահ մարմիններից** զգայուն լինել այնպիսի հանրային և քաղաքական նշանակության դիմումների և հայցերի նկատմամբ, ինչպիսիք են բնապահպանական գործերը, հանրությանը իրազեկել հանրային շահին առնչվող բնապահպանական գործերի բոլոր մանրամասների վերաբերյալ և ապահովել բնապահպանների աշխատանքի պաշտպանվածությունը պետական, մերձպետական և բիզնես կառույցների հնարավոր ստվերային միջամտություններից.

- **Իրավապահ մարմիններից** պատշաճ կերպով քննել սպառնալիքների թիրախում հայտնված իրավապաշտպանների դիմումները, իրական կամք դրսևորել և ջանքեր գործադրել սպառնալիքների հեղինակների բացահայտման ուղղությամբ, անպատժելի չթողնել իրավապաշտպանների հանդեպ թիրախավորումների ու սպառնալիքների արշավների կազմակերպիչներին (նաև վիրտուալ տարածքում կանանց և ԼԳԲՏ մարդկանց պաշտպանների դեմ քարոզիչներին, բնապահպանների զրպարտողներին), միջոցներ ձեռնարկել՝ հետագայում բացառելու ցանկացած իրավապաշտպանի թիրախավորումն ու որևէ տեսակի սպառնալիքի հնչեցումը, ապահովել իրավապաշտպանների պաշտպանվածությունը.

- **Իրավապահ մարմիններից և նախկին ու ներկա բարձրաստիճան պաշտոնյաներից** դադարեցնել իրավապաշտպանների և հանրային շահերի պաշտպանների նկատմամբ քաղաքական հաշվեհարդարի նպատակով իրականացվող բարոյական ճնշումները և խտրական պրակտիկաները, նրանց անձնական կյանքի պաշտպանվածության և անվտանգության նկատմամբ ոտնձգությունները, իրավական-քաղաքական հետապնդումները (այդ թվում՝ լրատվամիջոցների նկատմամբ).

- **Պետական բոլոր մարմիններից, ինչպես և մերձպետական կառույցներից** վերանայել գենդերային կարծրատիպերի, կնատյացության և հոմոֆոբիկ, ինչպես նաև ազգային-կրոնական փոքրամասնությունների նկատմամբ խտրական վարքագծերը՝ որդեգրելով ոչ խտրական քաղաքականություններ.

- **Փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանից** հաշվի առնել իր արտահայտությունների հանրային և քաղաքական հետևանքները և վերանայել իր հոմոֆոբ դիրքորոշումը, ինչպես նաև համապատասխանել միջազգային իրավունքի պահանջներին.

- **Երևանի քաղաքապետարանից** դադարեցնել հոմոֆոբ պրակտիկաները, դադա-

րեցնել ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպան կառույցների աշխատանքի խոչընդոտումը: Փոխարենը աջակցել իրավապաշտպանների գործունեությանը և Երևանի բոլոր բնակիչների իրավահավասարությանը.

- **ՀՀ արտգործնախարարությունից և ՀՀ մշակույթի նախարարությունից** ԼԳԲՏ անձանց իրավունքների հարցում անտարբեր չգտնվել, համապատասխանել ՀՀ Սահմանադրությանը և միջազգային իրավունքի նորմերին.

- **Հայ առաքելական եկեղեցուց** վերանայել սեփական խտրական քաղաքականությունը և դրանից բխող հանրային կյանքին միջամտությունները, իր կողմից մարդկանց որոշ խմբերի նկատմամբ ատելության քարոզն ու դրա տարածման քաղաքականությունը.

- **Միջազգային կազմակերպություններից և դրանց տեղական գրասենյակներից** առավել հետևողական լինել մարդու իրավունքների առաջնահերթության սկզբունքը Հայաստանում ամրապնդելու գործում և ՀՀ կառավարությունից համառորեն պահանջել միջազգային պարտավորությունների լիարժեք իրականացում: Բացի դրանից՝ սեփական կառույցների աշխատակիցների ընտրության չափանիշներում կարևորել նրանց ոչ խտրական և ոչ հոմոֆոբ դիրքորոշումները:

ՀՅՈՒՄԱՆ ՌԱՅԹՍ ՀԱՈՒՍ
ԵՐԵՎԱՆ

ՀՌՀ Երևանի առաքելությունն է պաշտպանել, հզորացնել և աջակցել իրավապաշտպաններին և իրավապաշտպան կազմակերպություններին Հայաստանում: Այն ձգտում է ապահով և համագործակցային հարթակ լինել Հայաստանի իրավապաշտպանների, ակտիվիստների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, շարժումների և քաղաքացիական նախաձեռնությունների համար, որոնք հաճախ թիրախավորվում են իրենց գործունեության համար:

ՀՌՀ Երևանը միջազգային ՀՌՀ Ցանցի անդամ է դարձել 2012-ին: Հայաստանում գրանցվել է 2014-ին: Ներկայումս այն միավորում է 4 իրավապաշտպան կազմակերպություններ:

Անդամ կազմակերպություններ

Իրական աշխարհ, իրական մարդիկ ՀԿ

Իրական աշխարհ, իրական մարդիկ ՀԿ-ն հիմնադրվել է Հայաստանում 2003-ին: Կազմակերպության առաքելությունն է բարձրացնել ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և նրանց ընտանիքների կյանքի որակը, համայնքի ներսում ուժեղացնել ինքնօգնության և փոխօգնության գաղափարը, համախմբել համայնքը՝ տրամադրելով հոգեբանական, սոցիալական և իրավական ծառայություններ, ինչպես նաև բարձրացնելով բուժման, ախտորոշման և կանխարգելման համընդհանուր մատչելիությունը:

Կանանց ռեսուրսային կենտրոն ՀԿ

Կանանց ռեսուրսային կենտրոնը հիմնադրվել է Հայաստանում 2003-ին: ԿՌԿ-ն առաջին ռեսուրսային կենտրոնն է, որ ստեղծվել է հետխորհրդային Հայաստանում երիտասարդ կանանց համար: ԿՌԿ-ն աշխատում է կանանց իրավունքների, վերարտադրողական և սեռական իրավունքների, սեռական բռնության, կոնֆլիկտների լուծման ու խաղաղաշինության ոլորտներում կանանց դերակատարության հարցերի շուրջ: ԿՌԿ-ն առաջին ՀԿ-ն է Հայաստանում, որ հասցեագրում է կանանց նկատմամբ սեռական բռնությունը: Այն նաև առաջինն է, որ ներդրել է կամավորության վրա հիմնված թեժ գիծ և ճգնաժամային կենտրոն, որը գործում է 2007-ից և ունի ուղղորդման մեխանիզմ: ԿՌԿ-ն ֆեմինիստական կազմակերպություն է, որն աշխատում է կանանց հետ և կանանց համար:

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ (Փինք Արմենիա)

Փինք Արմենիան հիմնադրվել է Հայաստանում 2007-ին: Կազմակերպության նպատակն է ստեղծել ապահով տարածք ԼԳԲՏ մարդկանց համար՝ խթանելով իրավական, հոգեբանական, սոցիալական պաշտպանությունն ու բարեկեցությունը: Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Փինք Արմենիան առաջ է մղում հավասարության գաղափարը, ՄԻԱՎ-ի հանդեպ խոցելի մարդկանց և ԼԳԲՏ մարդկանց ընդունումը:

«Սոցիոսկոպ» հասարակական ուսումնասիրությունների և խորհրդատվության կենտրոն ՀԿ

Սոցիոսկոպը հիմնադրվել է Հայաստանում 2008-ին երիտասարդ հասարակագետների կողմից: Ներկայումս Սոցիոսկոպի հետազոտությունները կենտրոնացած են քաղաքացիական հասարակության գործընթացների և հանրային դիմադրության, ժողովրդավարական ինստիտուտների և մարդու իրավունքների հարգանքի մշակույթի, սեռականության և ԼԳԲՏ հարցերի, խտրական պահպանողականության և հարակից հարցերի վրա՝ մասնավորապես արտահայտված մեդիայում և հանրային դիրքորոշումներում: Հետազոտություններից բացի՝ Սոցիոսկոպը նախաձեռնում է նաև կրթական ծրագրեր ՀԿ ներկայացուցիչների, հանրային շահերի պաշտպանների, ուսանողների և մարզային երիտասարդության համար՝ նպատակ ունենալով բարձրացնելու քննադատական մտածողությունը և զորակցելու նրանց հանրային ակտիվությանը:

ՀՅՈՒՄԱՆ ՈԱՅԹՍ ՀԱՈՒՍ
ԵՐԵՎԱՆ

**«Հյուման ռայթս հաուս Երևան»
իրավապաշտպան ոչ առևտրային
կազմակերպությունների միություն**

Կայք՝	http://humanrightshouse.org/members/armenia
Սոցիալական ցանց՝	https://www.facebook.com/HRHYerevan
	https://www.instagram.com/HRHYerevan
Հեռ.՝	+374 10 329032
Էլ. հասցե՝	hrhyerevan@gmail.com
Հասցե՝	Հովսեփ Էմին 119/2, Երևան 0012, Հայաստան